# ՀՀ կրթությունը և մշակույթը

### բ. Մշակութային կյանքը

Մշակութային դարավոր պատմություն ունեցող հայ ժողովրդի համար անկախ պետականության վերականգնումը պայմաններ ստեղծեց մշակութային զարթոնքի համար: Անհրաժեշտ էր Մայր Հայրենիքում հավաքել աշխարհասփյուռ հայ մշակույթի գործիչներին, լիցք հաղորդել ազգային մշակույթի վերելքին, իսկ դա պահանջում էր տևական ժամանակ ու աշխատանք:

1918 թ. ինչպես մշակութային բոլոր հիմնարկները, գրադարանները ևս գտնվում էին քայքայման գործընթացում: Միայն հասարակական լայն խավերի աջակցությամբ էր հնարավոր վերաբացել նախկին գրադարանները և հիմնել նորերը: 1919 թ. վերաբացվում են Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Նոր Բայազետի քաղաքային գրադարանները: Երևանում բացվում են «Ազատության լույս» և «Ախպեր–Ռաֆայելյան» գրադարան–ընթերցարանները: Հետագայում բացվում են Հայ օրիորդաց կոմիտեի «Ուսում» և Սարիղամիշի գավառային կոմիտեի «Միխո» գրադարանները[212]: Հովհաննես Թումանյանի անվամբ գրադարան էր գործում նրա ծննդավայր Դսեղ գյուղում: Վերաբացվում են մի շարք դպրոցական գրադարաններ: Բավական հարուստ գրքային ֆոնդ ունեին Երևանի ուսուցչական սեմինարիան, արական գիմնազիան, Գայանյան, թեմական դպրոցները: 1920 թ. սկսեցին գործել խորհրդարանի, արտաքին գործերի և աշխատանքի նախարարությունների գերատեսչական գրադարանները:

Հանրապետության մշակութային կյանքում նշանակալի երևույթ էր Հանրային գրադարանի հիմնադրումը: 1919 թ. հուլիսի 4-ին կառավարությունը օրենք ընդունեց պետական Հանրային մատենադարան (գրադարան) հիմնելու մասին: Հաստատվեց գրադարանի հաստիքային ցուցակը, և շուրջ 100 հազար ռուբլի հատկացվեց արժեքավոր և հազվագյուտ գրքեր գնելու համար[213]: Գրադարանի վերատեսուչ նշանակվեց մանկավարժ և բանասեր Ստեփան Կանայանը: Հանրային կրթության նախարարության անունից կոչ հղվեց համայն հայությանը՝ նվիրատվություններ կատարելու գրադարանին[214]: 1920 թ. մարտին Հայաստանի խորհրդարանը հաստատում է Հանրային գրադարանի կանոնադրությունը:

Արդեն 1920 թ. հոկտեմբերին Թիֆլիսում Հայաստանի Հանրային գրադարանի համար կենտրոնացվել էր 19 557, այլ գրադարանների համար՝ 14 962 կտոր գիրք, ինչպես նաև դասագրքեր, ձեռնարկներ և այլն: Գրադարանի համար գնվել էր Ն. Արղության–Երկայնաբազուկի հարուստ և արժեքավոր գրադարանը, որը բաղկացած էր 10 000 կտոր գրքից: Այդ հարուստ գրքային հավաքածուն ընդգրկում էր գրականագետներ Մ. Բերբերյանի, Տ. Նազարյանի, գրող Մուրացանի և այլոց գրադարանները՝ որպես նվիրատվություն:

[212] Տե՛ս Յառաջ, 4 դեկտեմբերի, 1919, 24 հունիսի, 1920:
[213] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 308, էջ 124:
[214] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 26, թ. 5:



Հայ ժողովուրդն առանձնահատուկ վերաբերմունք էր դրսևորում պատմամշակութային հուշարձանների, ազգային նյութական արժեքների պահպանության գործում: Մշակույթի այդ բնագավառում Հայաստանի կառավարության առջև կանգնած խնդիրներից էին Հանրապետությունում, ինչպես նաև արտերկրի հայ մշակույթի նյութական բարձրարժեք գործերը ժողովելը և պետական թանգարան հիմնելը: Այդ նպատակով 1919 թ. սկզբներին սկսում է գործել պատմամշակութային հարցերով զբաղվող ժամանակավոր հանձնաժողովը, որի կազմում էին ազգագրագետ Երվանդ Լալայանը, ճարտարապետ Թորոս Թորամանյանը, հնագետ Ա. Քալանթարը: 1919 թ. սեպտեմբերի 9-ին խորհրդարանն ընդունում է օրենք «Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում ազգագրական–մարդաբանական թանգարան–գրադարան հիմնելու մասին»: Թանգարան–գրադարանը վարելու գործը հանձնվում է Թիֆլիսում գտնվող Հայոց ազգագրական–մարդաբանական ընկերությանը: Մեկ այլ օրենքով թանգարանի պահպանության համար մինչև տարեվերջ հատկացվում է 30 հազար ռուբլի[215]:

Դեռևս 1919 թ. գարնանը Թիֆլիսում գտնվող Հայոց ազգագրական–մարդաբանական ընկերությունը, որը գոյության տասներեք տարիների ընթացքում հավաքել էր մեծ քանակությամբ ազգային արժեքներ, իր ընդհանուր ժողովում որոշել էր ընկերության շարժական և անշարժ գույքը՝ 10 հազար կտորից բաղկացած գրադարանը, պարբերականներ, 120 գրչագիր ձեռագիր, ազգագրական նյութեր և այլն, տեղափոխել Հայաստան և հանձնել հիմնվելիք պետական թանգարանին: Ընկերության անդամները Ե. Լալայանի գլխավորությամբ մեծ աշխատանք կատարեցին թանգարանի գույքը հայրենիք տեղափոխելու համար: Սակայն, ինչպես Ազգային գրադարանի գրքերի տեղափոխման հարցում, այնպես էլ թանգարանի գույքի հարցում Վրաստանի կառավարությունը տարբեր արգելքներ էր հարուցում: Միայն խորհրդային իշխանության հաստատումից հետո հնարավոր դարձավ դրանք տեղափոխել Երևան:

Հանրապետության կառավարությունը ուշադրություն էր նվիրում հանրապետության տարածքում գտնվող պատմամշակութային ճարտարապետական հուշարձանների պահպանությանը և գիտական ուսումնասիրությանը: Պատմամշակութային հուշարձանների պահպանության գործը կազմակերպելու նպատակով 1919 թ. հուլիսին որոշում ընդունվեց Հանրային կրթության և արվեստի նախարարության կազմում հուշարձանների պահպանման բաժին ստեղծելու մասին, որի վարիչ նշանակվեց ականավոր հնագետ Ա. Քալանթարը[216]:

Միայն 1919 թ. կեսերին, երբ Հանրապետություն է գալիս Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, հայ հանճարեղ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, հնությունների պահպանության գործը նոր՝ առավել բարձր մակարդակի վրա է դրվում: 1920 թ. հուլիսի 7-ին կառավարությունը, հաշվի առնելով Ա. Թամանյանի և այլ մասնագետների կարծիքը, ընդունեց օրենք «Հայաստանի հնությունների պետական պահպանության կոմիտե կազմակերպելու մասին»: Կոմիտեի հիմնադիր կազմում էին Հայաստանի գլխավոր ճարտարապետ Ա. Թամանյանը, համալսարանի պրոֆեսորներ Գարեգին եպիսկոպոսը և Ա. Քալանթարը: Կառավարության որոշման համաձայն՝ կոմիտեին էր վերապահվում հսկողության իրականացումը հանրապետության բոլոր հուշարձանների նկատմամբ՝ դրանց ցուցակագրումը, վերականգնումը, նորոգումը, հնագիտական պեղումների կազմակերպումը: Ծրագիրն իրականացնող աշխատանքային խմբի մեջ ընդգրկվեցին նկարիչներ Հակոբ Կոջոյանը, Ա. Տեչյանը, Մ. Մարգարյանը և Ս. Թարյանը

[215] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 439–440, էջ 171–172:
[216] Տե՛ս Յառաջ, 19 հոկտեմբերի, 1919:

(Թարխարարյան): Կոմիտեն կազմակերպչական մեծ աշխատանք կատարեց հուշարձանների պահպանության գործը կարգավորելու ուղղությամբ[217]:

Որպես առաջնային գործունեության կենտրոն՝ ընտրվել էր Անիի հնագարանը: 1920 թ. օգոստոսի կեսերին Անիում Ա. Թամանյանի ղեկավարությամբ տեղի է ունենում գիտական արշավախմբի անդամների խորհրդակցություն, որտեղ որոշվում է արշավախումբը բաժանել մի քանի խմբերի, որոնք պետք է գործեին տարբեր ուղղություններով: Առաջին խումբը Անիի հնագարանի վերահսկիչ Թորոս Թորամանյանի ղեկավարությամբ պետք է ուսումնասիրություններ կատարեր Անիում և հարակից տարածքներում: Երկրորդ արշավախումբը Ա. Քալանթարի ղեկավարությամբ և ճարտարապետ Ա. Գալկինի մասնակցությամբ պետք է ուսումնասիրեր Անի–Տեկոր–Նախճավան–Բագարան–Մրեն տարածաշրջանը: Գառնիի պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղված էր երրորդ խումբը՝ Գարեգին եպիսկոպոսի գլխավորությամբ: 1920 թ. սեպտեմբերի վերջերին արշավախմբի աշխատանքներն ավարտվեցին՝ դրանք հաջորդ տարի վերսկսելու մտադրությամբ:

* * *

Հայոց անկախ պետականության վերածնունդը ողջունեցին հայ գրական գործիչներից շատերը: «Մինչև այժմ մեր գրականությունը հարազատ հող չի ունեցել իր ոտի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել: Բանաստեղծի ոտը հարազատ ու իրական հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի: Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը ազատ Հայաստանն է, ազատ հարազատ հողը, ժողովուրդը»,– գրում էր Հովհաննես Թումանյանը 1919 թ.[218]: Հայ մշակույթի երախտավորներից Ա. Ահարոնյանը, Ն. Աղբալյանը, Լ. Շանթը, Վրթ. Փափազյանը և ուրիշներ գործուն մասնակցություն էին ունենում ազգային պետական շինարարության գործընթացին:

Հայաստանում գրական կյանքը գտնվում էր կազմավորման փուլում: 1919 թ. հունվարին հանրային կրթության նախարար Գ. Մելիք–Ղարագյոզյանի, Ն. Աղբալյանի, Վ. Ահարոնյանի, Ա. Շահխաթունու և այլոց նախաձեռնությամբ հիմնվում է գրական–գեղարվեստական (արվեստագետների) միություն, որը կազմակերպում է տարբեր միջոցառումներ[219]: Առաջին խոշոր իրադարձությունը գրական կյանքում տեղի ունեցավ 1919 թ. մարտի սկզբին, երբ խորհրդարանի դահլիճում մեծ հանդիսավորությամբ նշվեց ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 50–ամյա հոբելյանը: 1919 թ. ապրիլին միության հրավերով Երևան է գալիս ռուս նշանավոր բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին, որը հայ հասարակայնության համար կարդում է դասախոսություններ «Վանի ստվերները» և «Ժամանակակից հայկական քնարերգությունը» թեմաներով: Առաջին դասախոսությունը նվիրված էր Վանից ստացված տպավորություններին, իսկ երկրորդը՝ դարասկզբի հայ պոեզիայի նշանավոր դեմքերին՝ Հովհաննես Թումանյանին, Ավետիք Իսահակյանին, Վահան Տերյանին, Դանիել Վարուժանին[220]: Դասախոսություններով հանդես են գալիս նաև հայ մտավորականները: Այսպես՝ հունիսին միության նախաձեռնությամբ Գարեգին եպիսկոպոսը դասախոսում է «Գեղարվեստի զարգացումը XIII դարում» թեմայով:

217 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 853, էջ 372–373:
218 Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 396:
219 Տե՛ս Զանգ, 17 հունվարի, 1919:
220 Տե՛ս Աշխատավոր, 3 մայիսի, 1919:



Հանրապետության գրական կյանքի կազմակերպման գործում դեր ուներ կատարելու 1919 թ. հուլիսի 4–ին գրողների նախաձեռնությամբ գումարված Հայաստանի գրական ընկերության հիմնադիր ժողովը: Ընտրվում է վարչություն՝ Ն. Աղբալյանի նախագահությամբ: Հայաստանի գրական ընկերությունը կազմակերպում է Մեծ եղեռնի զոհ արևմտահայ գրողների՝ Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Գրիգոր Զոհրապի և Ռուբեն Սևակի հիշատակին նվիրված հուշ–երեկոներ, հայ գրականության երախտավորներին և երիտասարդ գրողներին նվիրված գրական դասախոսություններ: Գրական միջոցառումներից մեկը նվիրված էր Եղիշե Չարենցի գրական գործունեությանը: Հայ գրականության երկնակամարում, ինչպես նշում է իր դասախոսության մեջ Ն. Աղբալյանը, հայտնվել է նոր անուն՝ Եղիշե Չարենց[221]: Հանրային կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի հրամանով Ե. Չարենցը նշանակվում է նախարարության հատուկ հանձնարարությունների կոմիսար: Նրա ստեղծագործական ուղին մշտապես եղել է Ն. Աղբալյանի ուշադրության կենտրոնում: «Նա մրրկահավն եղավ աշխարհասասան հեղափոխության, որ թռած էր Հայաստան երկրից՝ մասնակցելու խելագարված ամբոխների գրոհին»,– գրում է Ն. Աղբալյանը պոետի մասին[222]:

Հայ գրողների նյութական ծանր վիճակից ելնելով՝ օգնության խնդրանքով Հայաստանի կառավարությանն է դիմում Հովհաննես Թումանյանը: 1919 թ. հուլիսի 7–ին ընդունվեց օրենք գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին օգնություն ցույց տալու մասին[223], իսկ տրամադրված գումարը Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ բաժանվում է առավել կարիքավորներին:

Հայ գրողների չափածո ստեղծագործությունների հրատարակման գործում չնորհալի գործ էր կատարում հայ պարբերական մամուլը: Մամուլի էջերում է հանդես գալիս գրական առաջին քայլերը կատարող Ակսել Բակունցը, երգիծական սուր հոդվածներ էին տպագրում արևմտահայ երիտասարդ գրող Լեռ Կամսարը և ուրիշներ: Որբանոցային մամուլում տպագրվում են սկսնակ բանաստեղծներ Նաիրի Զարյանի, Գուրգեն Մահարու, Սարմենի, Վաղարշակ Նորենցի, Խաչիկ Դաշտենցի ստեղծագործությունները[224]:

Ազգային արվեստի զարգացմանը նպաստելու նպատակ ուներ հանրային կրթության նախարարության վերակազմավորումը հանրային կրթության և արվեստի նախարարության: Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում, չնայած սոցիալ–տնտեսական ծանր պայմաններին, մի շարք կարևոր որոշումներ ընդունվեցին և միջոցառումներ ձեռնարկվեցին գեղարվեստական կյանքը խթանելու ուղղությամբ:

1919 թ. մայիսի 25–ին Հանրապետության տարելիցի առթիվ Երևանի նոր գիմնազիայի շենքում (այժմ՝ Խ. Աբովյանի անվան դպրոց) բացվեց Թիֆլիսից բերված՝ հայ արվեստագետների միության երկրորդ ցուցահանդեսը: Ներկայացված էին գեղարվեստի հայ վարպետների շուրջ 350 գործեր, այդ թվում՝ աշխարհահռչակ քանդակագործ Ռոդենի աշակերտ Հակոբ Գյուրջյանի քանդակները, հայ գեղանկարչության մեծերի՝ Մարտիրոս Սարյանի, Եղիշե Թադևոսյանի, Փանոս Թերլեմեզյանի, Հակոբ Կոջոյանի և ուրիշների կտավները և այլ գործեր: Ցուցանմուշների մի մասը վաճառվեց: Հանրապետության կառավարությունը նկարներ ձեռք բերելու նպատակով միջոցներ հատկացրեց: Հաջորդ օրը նախարարների խորհրդում լսվեց լուսավորության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի զեկուցումը «Հայ ազատագրության հերոսների հիշատակին հուշարձան կառուցելու մա-

221 Տե՛ս Անանյան Գ., Նիկոլ Աղբալյան, Երևան, 2002, էջ 69:
222 Տե՛ս Եղիազարյան Ա., Չարենցը և պատմությունը (ակնարկներ), Երևան, 1997, էջ 165:
223 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 314, էջ 127:
224 Տե՛ս Հովակիմյան Բ., Ցեղասպանության թեման հայ թատրոնում (1895–1995), Երևան, 1998, էջ 41:

ափն»: Հուշարձանը կանգնեցվելու էր Երևանում պետության և ժողովրդական հանգանակության միջոցներով:

Հայաստանի առաջին Հանրապետության տարեդարձը նշվեց մեծ շուքով: Երևանի գեղարվեստական ձևավորման աշխատանքները ղեկավարում էր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: Փողոցները և հրապարակները զարդարվեցին գունագեղ դրոշներով ու ժապավեններով, ծաղկեփնջերով ու ծաղկաշղթաներով, գորգերով ու պաստառներով:

Հայ նկարիչների ջանքերով ստեղծվեցին Հայաստանի առաջին Հանրապետության դրոշը, զինանշանը, դրամանիշներն ու նամականիշները: Ծիածանի երեք՝ կարմիր, կապույտ և ծիրանի գույներից կազմված դրոշի նախանկարն առաջարկել էր Մարտիրոս Սարյանը, զինանշանը նախագծել էին Հ. Կոջոյանը և Ա. Թամանյանը: Ազգային առաջին թղթադրամներն ու նամականիշները ձևավորել էին Հ. Կոջոյանն ու Ա. Ֆեթվաճյանը:

Այդ տարիներով թվագրված նկարչական սակավաթիվ գործերից են Հ. Կոջոյանի և Սեդրակ Առաքելյանի բնանկարներն ու կենցաղային պատկերները, մասնավորապես՝ Հ. Կոջոյանի «Անիի ավերակները»: Անիում, Սևանում և այլուր Ս. Առաքելյանի կատարած լավագույն էտյուդներից է գունային անսովոր թարմությամբ օժտված «Ցորենն են չորացնում» յուղանկարը: Բնականից գրաֆիկական մի քանի էսքիզներ ու ճեպանկարներ է արել 1919 Հայաստան այցելած Մ. Սարյանը:

Բազմադարյա պատմություն ունեցող հայ թատրոնը ծանր վիճակում էր: 1919 թ. հուլիսին հայտնի դերասան Օվի Սևումյանը Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և գեղարվեստի նախարար Նիկոլ Աղբալյանին ներկայացնում է պետական թատրոն ստեղծելու ծրագիր և հայտ: Նպատակ ունենալով համախմբելու արևելահայ և արևմտահայ բեմական ուժերը՝ նա մեկնում է Կ. Պոլիս: Կառավարությունը միջոցներ չուներ Օ. Սևումյանի ծրագրի իրականացման համար, բայց կարողանում է նպաստել դրամատիկական ստուդիայի կազմակերպմանը, որի նախաձեռնողը Վարդան Միրզոյանն էր: Այստեղ էին նաև ապագա բեմադրիչ Վարդան Աճեմյանը, դերասաններ Գուրգեն Ջանիբեկյանն ու Թաթևոս Սարյանը:

Հանրապետությունում թատերական գործի կազմակերպման ակունքներում էր կանգնած հայ թատրոնի մեծերից մեկը՝ Հովհաննես Զարիֆյանը: Նա սկսում է թատերական խումբ ստեղծելու աշխատանքներ: Խմբում ընդգրկվում են արժեքավոր Արշավիր Շահխաթունին, Անդրանիկը և ուրիշներ, ինչպես նաև սկսնակ դերասաններ: Խմբի հետ հյուրախաղերով ելույթ էր ունենում հայ հանճարեղ դերասան Հովհաննես Աբելյանը: Հ. Զարիֆյանի թատերական խմբի գործունեությունն անգնահատելի էր, քանի որ բարոյահոգեբանական մեծ ազդեցություն էր գործում ազգաբնակչության վրա՝ ցույց տալով, որ հայ թատրոնը կարող է ապրել և ստեղծագործել նույնիսկ դժվարին պայմաններում: Հայ թատերական կյանքում մեծ երևույթ էին հատկապես դրամատիկական խմբի հյուրախաղերը Հայաստանում 1920 թ. հուլիս–օգոստոս ամիսներին: Երկու ամիս չարունակ հայ թատերասեր ժողովուրդը հիացմունքով էր դիտում արժեքավոր, մեծաշնորհ դերասանների և հատկապես Հ. Աբելյանի դերակատարումները: Խմբի խաղացանկը բավական հարուստ էր՝ Վ. Շեքսպիրի «Օթելլո», «Լիր արքա», «Համլետ», Հ. Սենկևիչի «Յո՞ երթաս», Լ. Շանթի «Հին աստվածներ», «Կայսր» և այլ պիեսներ[225]: Դրամատիկական խումբը հյուրախաղերով հանդես եկավ նաև Ալեքսանդրապոլում և Կարսում:

Երևանյան խումբը բեմադրում է Ա. Դյումայի «Քինը», Շիրվանզադեի «Նամուսը», Հ. Զուդերմանի «Հայրենական տունը», Հ. Իբսենի «Ժողովրդի թշնամին» (Հ. Աբելյանի մասնակցությամբ) և այլ պիեսներ: Խմբում առանձնանում էր դրամատիկական գլխավոր

[225] Տե՛ս Հովհաննես Զարիֆյան, Երևան, 1977, էջ 232: Յառաջ, 27 հուլիսի, 1920:



հերոսների դերակատար Ա. Շահխաթունին՝ կրթությամբ զինվորական (Երևանի զինվորական պարետը) և բացառիկ հմայքի տեր արտիստ: Երևանյան բեմում նա խաղացել է Քինի («Քին»), Սեյրանի («Նամուս»), Արեգայի («Հին աստվածներ») դերերը: Նրան ընդունում էին որպես Վ. Փափազյանի մրցակից: Հետագայում Ա. Շահխաթունին տեղափոխվեց Փարիզ և իրեն դրսևորեց ֆրանսիական կինոյում՝ որպես գեղեցկադեմ հերոսների դերակատար և կինոգրիմի նոր սկզբունքների հայտնագործող:

Դերասանական մեկ այլ արժեքավոր խումբ Անդրանիկի ղեկավարությամբ ներկայացումներ էր տալիս Դիլիջանում: Այդ խմբում էր նշանավոր դերասանուհի Հասմիկը[226]:

1920 թ. ամռանը Հանրապետությունում թատերական կյանքն արդեն աշխուժացել էր: Հոկտեմբերի 20-ին կառավարության որոշմամբ՝ խորհրդարանի նախկին շենքը հատկացվեց պետական թատրոնի կազմակերպմանը[227]: Փաստորեն Հայաստանի առաջին Հանրապետության օրոք դրվեց ազգային պետական թատրոնի հիմքը:

1919–1920 թթ. ընթացքում Հանրապետությունում կազմակերպվում էին նաև սիրողական ներկայացումներ դպրոցների մանկավարժների, հասարակական կազմակերպությունների ուժերով: Այդպիսի ներկայացումներ տեղի ունեցան Աշտարակում, Վաղարշապատում, Ղարաքիլիսայում և այլ բնակավայրերում:

1919 թ. ամռան և աշնան ամիսներին Հանրապետությունում երաժշտական կյանքը որոշ աշխուժացում է ապրում: Մի խումբ երաժշտասերների նախաձեռնությամբ հիմնվում է «Կոմիտաս» երաժշտական ընկերությունը, որի նպատակը Փարիզում գտնվող երգահան Կոմիտասին նյութապես օգնելն էր: Այդ շրջանում Երևան հյուրախաղերի են գալիս արտերկրի մի քանի հայտնի երաժիշտ կատարողներ՝ Թիֆլիսի պետական թատրոնի երգչուհի Ֆ. Ջելինսկայան ու Ս. Զամաղանովը, նշանավոր ջութակահար Յ. Բիչբերգը, երգչուհի Ե. Գորսկայան, Վարշավայի պետական թատրոնի մեներգչուհի Ա. Լանսկայան, ջութակահար Լ. Բեննդիցկին և ուրիշներ[228]: Հանրապետությունում հյուրախաղերի կազմակերպմամբ զբաղվում էր Գարեգին Երիցյանը: Նրա ջանքերի շնորհիվ 1919 թ. դեկտեմբերին Թիֆլիսի Տ. Թառումյանի ղեկավարած «Գեղարվեստ» համերգային միությունը կազմակերպում է արվեստագետների մի մեծ խմբի համերգային հյուրախաղերը Հանրապետության երեք քաղաքներում՝ Երևանում, Կարսում և Ալեքսանդրապոլում: Այդ հյուրախաղերին մասնակցում են նշանավոր թավջութակահար Ն. Լևիեն, Կ. Սարաջևը, Ն. Ջերեպինը, Մ. Միրիմանյանը և ուրիշներ, ինչպես նաև բալետային խումբը[229]: Հոկտեմբերին Երևանում գրական ընկերությունը կազմակերպում է հայ ժողովրդական երաժշտության ներկայացուցիչ՝ թառահար Ներսես Ղորղանյանի գործունեության 25-ամյակին նվիրված հոբելյանական երեկո:

1919 թ. նոյեմբերին կազմակերպված քառաձայն երգեցիկ խումբը համերգներով հանդես է գալիս մայրաքաղաքում և գյուղերում[230]:

1920 թ. փետրվարին կառավարությունը գործնական քայլեր է նախաձեռնում բարձրագույն երաժշտական դպրոց (կոնսերվատորիա) հիմնելու ուղղությամբ: Ստեղծվում է կոնսերվատորիայի կազմակերպման հիմնադրամ, որի նախագահն էր Հանրապետության վարչապետ Ա. Խատիսյանը: 1920 թ. օգոստոսի 9-ին կառավարությունն ընդունում է

[226] Տե՛ս Յառաջ, 9 սեպտեմբերի, 1920:

[227] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 1117, էջ 474:

[228] Տե՛ս Յառաջ, 30 հուլիսի, 21 սեպտեմբերի, 25 հոկտեմբերի, 2 նոյեմբերի, 1919: Ժողովուրդ, 22 նոյեմբերի, 1919:

[229] Տե՛ս Ժողովուրդ, 4 դեկտեմբերի, 1919:

[230] Տե՛ս Յառաջ, 18 նոյեմբերի, 28 դեկտեմբերի, 1919:

օրենք Երևանում բարձրագույն երաժշտական դպրոց հիմնելու մասին[231]: Կոնսերվատորիայի տնօրենի (ռեկտորի) պաշտոնում աշխատելու հրավեր է ուղարկվում հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր՝ ականավոր երգահան Ալեքսանդր Սպենդիարյանին: Որպես դասատուներ՝ հրավիրվում են Ռոմանոս Մելիքյանը, Մ. Միրիմանյանը, Ն. Տատուրյանը, Ս. Բարխուդարյանը և ուրիշներ:

Հանրապետության կառավարությունը քայլեր է ձեռնարկում քաղաքաշինության զարգացման ուղղությամբ և 1919 թ. մայիսին որոշում է ընդունում խնամատարության նախարարությանը կից գլխավոր ճարտարապետի վարչության ստեղծման մասին, որի պետ է նշանակվում Ա. Թամանյանը[232]: Ստանձնելով գլխավոր ճարտարապետի պաշտոնը՝ Ա. Թամանյանը բեղմնավոր գործունեություն է ծավալում ճարտարապետական և շինարարական տարբեր հարցերի լուծման ուղղությամբ: Այդ ժամանակ Երևանը գավառային քաղաք էր, չուներ պետական հաստատությունների համար անհրաժեշտ շենքեր, բացի այդ, կային մի քանի կիսակառույցներ՝ խորհրդարանի, արական գիմնազիայի և այլ շենքեր, որոնց շինարարությունը ձգձգվում էր շինանյութերի բացակայության պատճառով: 1920 թ. աշնանը խորհրդարանի և արական գիմնազիայի շենքերի շինարարությունն ավարտվել էր, և դրանք հանձնվել էին շահագործման:

Քաղաքաշինության հարցերին է անդրադառնում 1920 թ. հունվարի 4-ին Երևանում բացված Հայաստանի քաղաքների միության հիմնադիր համագումարը: Մշակվում է Երևանում «ժողովրդական տուն» կառուցելու ծրագիրը, իսկ Ա. Թամանյանը սկսում է աշխատել մայրաքաղաք Երևանի գլխավոր հատակագիծը կազմելու վրա: Այսպիսով Հայաստանի Հանրապետության օրոք հայ արվեստը, որը մինչ այդ զարգանում էր գաղթօջախներում, սկսում է զարգանալ նաև Մայր Հայրենիքում:

* * *

Զգալի աշխատանք կազմակերպվեց նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում: Այդ աշխատանքներն իրականացնում էր Հանրային կրթության և արվեստի նախարարության բժշկասանիտարական բաժինը: Հիմնադրվեցին Հայաստանի մարմնամարզական ընդհանուր միությունը, Հայաստանի շախմատիստների ընկերությունը, Երևանի «Դյուցազն» մարզական ակումբը, Ալեքսանդրապոլի «Բազե» մարմնամարզական ընկերությունը և այլն[233]: 1920 թ. ապրիլի 27-ին Հանրապետության Հանրային կրթության և արվեստի նախարարությունը դիմեց Կոստանդնուպոլսի Հայ մարմնակրթական ընդհանուր միության «Հայ սկաուտներ» կազմակերպությանը՝ խնդրելով Հայաստան ուղարկել սկաուտական մարզիչների: Հայ մարմնակրթական ընդհանուր միության վկայագրով 1920 թ. հուլիսի 26-ին Հայաստան ժամանեցին մանկավարժ-մարզիչներ՝ Վահան Չերազը, Օնիկ Յաղմանյանը, Տիգրան Խոյանը, իսկ սկաուտմերերին՝ ևս 126 հոգի: Նրանք աշխատանքներ ծավալեցին Հայաստանի քաղաքներում ու շրջաններում: Սկաուտական խմբերում դպրոցներից ընդգրկվեցին մոտ 1000 հոգի, իսկ Երևանի Գայանյան և Ալեքսանդրյան դպրոցներում ստեղծված սկաուտական խմբերում ընդգրկվեցին նաև 185 աղջիկներ:

Առաջին Հանրապետության ստեղծումը դրական ներգործություն ունեցավ հայկական գաղթօջախներում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման վրա: Հայաստանի մարզական պատմության համար հիշատակության է արժանի 1920 թ. Անտվերպենի 7-րդ ամառային օլիմպիական խաղերում հայազգի Հայկ Փրինսթի (ԱՄՆ) կողմից բրոնզե մեդալի նվաճումը ջրացատկորդների մրցումներում:

[231] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 961, էջ 415:

[232] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 426:

[233] ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 157, թ. 1–4, գ. 227, թ. 49, 56–58:



1918–1920 թթ. ՀՀ մարզական կազմակերպությունները աշխատանք են տարել միջազգային ասպարեզ դուրս գալու նպատակով: 1919 թ. Լոզանում կայացած Միջազգային օլիմպիական կոմիտեի (ՄՕԿ) նստաշրջանում, ապա 1920 թ. Ամստերդամում կայացած ՄՕԿ-ի հաջորդ նստաշրջանում Հայաստանի և հայ մարզիկների շահերը պաշտպանելու, 1920 թ. Անտվերպենի 7-րդ օլիմպիական խաղերին Հայաստանի մարզիկների մասնակցության հարցը դրականորեն լուծելու համար ջանքեր գործադրեց Ռուսաստանի ներկայացուցիչ, ՄՕԿ-ի անդամ իշխան Լեոն Ուրուսովը: Չնայած ՄՕԿ-ի անդամ երկրների ճնշող մեծամասնության դրական կարծիքին՝ ՄՕԿ-ի նախագահ բարոն Պիեռ դը Կուբերտենի առաջարկությամբ որոշվեց հարցին անդրադառնալ Հայաստանի կառավարության պաշտոնական միջնորդությունը ստանալուց հետո: Սակայն հարցը մնաց չլուծված՝ Հայաստանի առաջին Հանրապետության անկման պատճառով:

Աղբյուրը՝ *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 92-99: